ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ՆԱԽԱԳԻԾ

Կ-1016[1]-06.06.2016,09.06.2016-ՏՏ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի 84-րդ հոդվածի 14-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ուրցաձոր, Տավուշի մարզի Նոյեմբերյան, Այրում, Կողբ, Սյունիքի մարզի Գորիս, Գորայք, Մեղրի, Տեղ համայնքներում 2016 թվականի սեպտեմբերի 18-ին, իսկ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա, Աշոցք, Արփի, Սարապատ, Վայոց ձորի մարզի Զառիթափ, Ջերմուկ, Վայք, համայնքներում 2016 թվականի հոկտեմբերի 2-ին անցկացնել համայնքների ղեկավարների և ավագանիների անդամների ընտրություններ՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների անցկացման կարգով:

Ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Լանջանիստ, Շաղափ, Ուրցաձոր, Շիրակի մարզի Ալվար, Աղվորիկ, Ամասիա, Աշոցք, Արդենիս, Արեգնադեմ, Արփենի, Բանդիվան, Բաշգյուղ, Բավրա, Բերդաշեն, Բյուրակն, Գառնառիճ, Գոգհովիտ, Գտաշեն, Զարիշատ, Զորակերտ, Զույգաղբյուր, Թավշուտ, Թորոսգյուղ, Լեռնագյուղ, Ծաղկուտ, Կարմրավան, Կաքավասար, Կրասար, Հարթաշեն, Հողմիկ, Հովտուն, Ձորաշեն, Ղազանչի, Մեծ Սեպասար, Մեղրաշատ, Մուսայելյան, Շաղիկ, Ողջի, Ջրաձոր, Սալուտ, Սարագյուղ, Սարապատ, Սիզավետ,

Վարդաղբյուր, Ցողամարգ, Փոքր Սարիար, Փոքր Սեպասար, Սյունիքի մարզի Ագարակ, Ալվանք, Ակներ, Արավուս, Բարձրավան, Գորայք, Գորիս, Գուդեմնիս, Լեհվազ, Լիճք, Խնածախ, Խնձորեսկ, Խոզնավար, Ծղուկ, Կարճևան, Կոռնիձոր, Կուրիս, Հարթաշեն, Մեղրի, Ներքին Խնձորեսկ, Նռնաձոր, Շուռնուխ, Շվանիձոր, Որոտան, Սառնակունք, Սպանդարյան, Վահրավար, Վաղատուր, Վարդանիձոր, Վերիշեն, Տաշտուն, Տեղ, Քարահունջ, Քարաշեն, Վայոց ձորի մարզի Ազատեկ, Արին, Արտավան, Բարձրունի, Գնդևազ, Գոմք, Զառիթափ, Զեդեա, Խնձորուտ, Կարմրաշեն, Հերհեր, Մարտիրոս, Նոր Ազնաբերդ, Ջերմուկ, Սարավան, Սերս, Փոռ, Վայք, Տավուշի մարզի Այրում, Արճիս, Բագրատաշեն, Բաղանիս, Բարեկամավան, Բերդավան, Դեբեդավան, Դեղձավան, Դովեղ, Զորական, Լճկաձոր, Կոթի, Կողբ, Հաղթանակ, Նոյեմբերյան, Ոսկեպար, Ոսկեվան, Պտղավան, Ջուջևան համայնքների ղեկավարների և ավագանիների անդամների լիազորությունները համարել դադարած:»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորներից ստացված դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
Էդմոն Մարուքյան և այլ պատգամավորներ	«Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված է, որ «Համայնքները միացնելու կամ առանձնացնելու հարցով Հայաստանի Հանրապետության կառավարությունն օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալուց առաջ համապատասխան համայնքներում նշանակում է տեղական հանրաքվեներ:» Առաջարկում եմ օրենսդրական փաթեթում ներառել նաև խոշորացվող համայնքներում անցկացված հանրաքվեների արդյունքները:	Չի ընդունվել	Քանի որ ՀՀ Սահմանադրության (2015 թ. դեկտեմբերի 6-ի խմբագրությամբ) 190-րդ հոդվածով տեղական հանրաքվե անցկացնելու պահանջը չկա, այլ կա Ազգային ժողովի կողմից օրենք ընդունելիս համայնքների կարծիքը լսելու պահանջ՝ ուստի այդ պահանջի համաձայն անցկացվել են լսումներ: Ինչ վերաբերում է «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթին, կապված համայնքները միացնելու կամ առանձնացնելու հարցով ՀՀ կառավարության կողմից հանրաքվե նշանակելու հետ, հայտնում ենք, որ ՀՀ Նախագահի 2016 թվականի

			փետրվարի 10-ի ՆՀ-170-Ա հրամանագրի 5-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներին համապատասխան՝ ՀՀ կառավարությունը հաստատել է ՀՀ Սահմանադրության փոփոխությունների՝ օրենքով կարգավորման պահանջ ուղղակիորեն նախատեսող դրույթների հիման վրա ընդունման, փոփոխման կամ լրացման ենթակա օրենքների ցանկը, որի 20-րդ կետով (պատասխանատու՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն) նախատեսված է մինչև 2017 թվականի սեպտեմբերի 1-ին տասնօրյակը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որտեղ նախատեսվում է ներառել համայնքները միավորելու դեպքում՝ կառավարության կողմից տեղական հանրաքվե նշանակելու պահանջը հանելու վերաբերյալ կարգավորումներ:

<table>
<tr>
<td>ՀՀ Ազգային Ժողովի փոխնախագահ
Է. Շարմազանով,
Ա. Մանուկյան,
Է. Մարուքյան,
Ա. Հովհաննիսյան</td>
<td>Առաջարկում ենք վերանայել Կողբ և Բերդավան համայնքների միավորման հարցը՝ քննարկելով հետևյալ երկու տարբերակները.
- այդ համայնքները թողնել որպես ինքնուրույն համայնքներ
- Կողբ և Բերդավան համայնքները ներառել Նոյեմբերյան խոշորացվող համայնքում</td>
<td>Ընդունվել է մասամբ</td>
<td>Կողբ համայնքը միավորվել է Զորական համայնքի հետ, ձևավորելով Կողբ համայնք, իսկ Բերդավան համայնքը ներառվել է Նոյեմբերյան խոշորացվող համայնքում</td>
</tr>
<tr>
<td>Վահրամ Մկրտչյան</td>
<td>ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ
(Կ-1016-06.06.2016, 09.06.2016 – SS-010/0)

Առաջարկում եմ՝
«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում (այսուհետ նախագիծ) կատարել հետևյալ լրացումը.
1. 1-ին հոդվածում նշված աղյուսակը լրացնել՝
<table><tr><th>«Մարզի անվանումը</th><th>Համայնքի անվանումը</th><th>Բնակավայրի անվանումը</th></tr><tr><td>Արագածոտն</td><td></td><td></td></tr><tr><td></td><td>53. Ծաղկահովիտ</td><td>Ծաղկահովիտ գյուղ</td></tr><tr><td></td><td></td><td>Վարդաբլուր գյուղ</td></tr><tr><td></td><td></td><td>Կանիաշիր գյուղ</td></tr><tr><td></td><td></td><td>Ճարճակիս գյուղ</td></tr></table></td>
<td>Ընդունվել է ի գիտություն</td>
<td>Առաջարկությանը կանդրադառնանք ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների խոշորացման համատեքստում:</td>
</tr>
</table>

		Մելիքգյուղ գյուղ
		Միջնատուն գյուղ
		Միրաք գյուղ
		Շենկանի գյուղ
		Ջամշլու գյուղ
		Ռյա թազա գյուղ
		Սիփան գյուղ
		Ալագյազ գյուղ
		Բերքառատ գյուղ
		Գեղադիր գյուղ
		Գեղաձոր գյուղ
		Գեղարոտ գյուղ
		Լեռնապար գյուղ
		Ծիլքար գյուղ
		Հնաբերդ գյուղ

		Նորաշեն գյուղ
		Սադունց գյուղ
		Ավշեն գյուղ

	2. Նախագծի 2-րդ հոդվածում «հավելված 2-ի» բառերից հետո ավելացնել հետևյալը՝ «2.1 բաժնի 6-րդ 9-րդ, 14-րդ, 27-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 37-րդ, 49-րդ, 56-րդ, 65-րդ, 70-րդ, 71-րդ, 78-րդ, 83-րդ, 90-րդ, 92-րդ, 94-րդ, 97-րդ, 100-րդ, 115-րդ»: 3. Նախագծում կատարել համապատասխան լրացում առաջարկվող նոր՝ Ծաղկահովիտ համայնքի վարչական սահմանների նկարագրության մասով: **«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում կատարել հետևյալ լրացումները.** 1. 1-ին հոդվածի 1-ին պարբերությունում «իսկ Հայաստանի Հանրապետության» բառերից հետո ավելացնել «Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ» բառերը, իսկ 2-րդ պարբերությունում «Հայաստանի Հանրապետություն» բառերից հետո ավելացնել «Արագածոտնի մարզի Ալագյազ, Ավշեն, Բերքառատ, Գեղադիր, Գեղաձոր, Գեղարոտ, Լեռնապար, Ծաղկահովիտ, Ծիլքար, Կանիաշիր, Հնաբերդ, Ճարճակիս, Մելիքգյուղ, Միջնատուն, Միրաք, Նորաշեն, Շենկանի, Ջամշլու, Ռյա թազա, Սադունց, Սիփան, Վարդաբլուր» բառերը:		